ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

—— հունվարի 2022 թվականի №—Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի №86Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մարտի 24-ի №86-Ա որոշմամբ սահմանվել է, որ Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեի նոր համակարգի ջրահեռացման համակարգին միացումը իրականացվում է ժամանակավոր՝ շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով, նախատեսելով ջրահեռացման համակարգին միացումը հողամասին հարակից կոյուղագծերի օգտագործմամբ՝ մինչև «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Մատակարար) 2020 թվականի նոյեմբերի 12-ին տրամադրված №ՎՋ 593/2020 տեխնիկական պայմանների համաձայն նոր ջրահեռացման համակարգի կառուցումը, իսկ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ժամկետի պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 6 ամիս,

բ) Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեի կառուցապատող «ՌԵՆՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի դեկտեմբերի 13-ի №21-97 գրությամբ տեղեկացրել է, որ տվյալ հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի ջրահեռացման նպատակով Մատակարարից 2020 թվականի նոյեմբերի 12-ին ստացել է №ՎՋ593/2020 հիմնական տեխնիկական պայմանները, որոնց հիման վրա մշակվել է ջրահեռացման նախագիծ, որը հաստատվել է Մատակարարի կողմից, սակայն չի հաստատվել Երևանի քաղաքապետարանի կողմից, և այս պահին

տարվում են աշխատանքներ քաղաքապետարանի համար ընդունելի նոր նախագծի մշակման նպատակով, ուստի դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ 6 ամսով երկարաձգելու 2021 թվականի մարտի 24-ի №86-Ա որոշմամբ սահմանված ժամկետը,

գ) Մատակարարը սույն թվականի հունվարի 18-ի №ՄՇ1021 և Դիմող անձը սույն թվականի հունվարի 11-ի №22-01 գրություններով հայտնել են, որ չեն առարկում 2021 թվականի մարտի 24-ի №86-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելուն, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մարտի 24-ի «Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեի նոր համակարգը ջրահեռացման համակարգին միացնելու մասին» №86-Ա որոշման 1 կետի 2-րդ ենթակետում «6 ամիս» բառերը փոխարինել «12 ամիս» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
— հունվարի 2022թ.